Լևոն Իգիթյան

Լևոն Սուրենի Իգիթյանը ծնվել է 1939թ. Վրաստանի Լյուքսեմբուրգ քաղաքում:
1946թ.-ից ապրում է Երևանում:
1956 թ. ավարտել է Երևանի N 12 միջնակարգ դպրոցը:
1959 թ. ընդունվել է Երևանի Պոլիտեխնիկական ինստիտուտի ճարտարապետական բաժին: Ուսանելու հետ միաժամանակ աշխատել է «Հայպետնախագիծ» ինստիտուտում:
1957-58 թթ. աշխատել է «Երևանկաբել» գործարանում:
1958-59 թթ.՝ «Արմժիլգրաժդանպրոյեկտ» ինստիտուտում:
1966 թ. ավարտել է Երևանի Պոլիտեխնիկական ինստիտուտի ճարտարապետական բաժինը:
1969-77թթ.՝ «Երևաննախագիծ» ինստիտուտի ճարտարապետ, խմբի ղեկավար,սեկտորի պետ:
1977-85 թթ.՝ Հայաստանի ճարտարապետների միության պատասխանատու քարտուղար, համատեղությամբ աշխատել է «Երևաննախագիծ» ինստիտուտում՝ որպես խմբի ղեկավար:
1986-2000թթ.՝ Հայաստանի Պետշինի (ներկայումս ՀՀ քաղաքաշինության նախարարություն) բաժնի վարիչ, վարչության պետ:
2000-2004թթ.՝ Երևանի քաղաքապետարանի քաղաքաշինության խորհրդի քարտուղար (հասարակական կարգով):
Ներկայումս աշխատում է «Նարեկ Սարգսյան» ճարտարապետական արվեստանոցում: Նախագծել է հասարակական, բնակելի հուշարձանային օբյեկտներ: Վերջին աշխատանքներից է Առնո Բաբաջանյանի արձանը՝ճարտարապետական լուծման հեղինակ (քանդակագործ Դավիթ Բեջանյանի հետ), Վ. Սարոյանի հուշարձանը (քանդակագործ Դավիթ Երևանցու և ճարտարապետ Ռ. Հասրաթյանի հետ):
Իրականացրել է շուրջ 40 հուշարձանային նախագծեր և 100 գրքի ձևավորում:
1974-86 թթ.՝ Հանրապետության ստեղծագործող երիտասարդների խորհրդի նախագահ:
1974-2007 թթ.՝ Հայաստանի ճարտարապետների միության վարչության անդամ:
1979-1991 թթ ՝ ԽՍՀՄ Ճարտարապետների միության վերստուգիչ հանձնաժողովի անդամ:
2006-2008 թթ.՝ Ճարտարապետության բնագավառում ՀՀ պետական մրցանակների հանձնաժողովի նախագահ:
2009թ. Հայաստանի հանրապետական կուսակցության համամասնական ցուցակով ընտվել է Երևանի ավագանու անդամ:

2009թ.-ից՝ «Գեղագիտության ազգային կենտրոն» ՊՓԲԸ գլխավոր տնօրեն և ժամանակակից արվեստի թանգարանի կառավարման խորհրդի նախագահ:
2012թ. արժանացել է Հայաստանի Հանրապետության մշակույթի վաստակավոր գործիչ կոչման:
2013 թվականի մայիսի 5-ին Հայաստանի Հանրապետական կուսակցության համամասնական ցուցակով ընտրվել է Երևանի ավագանու անդամ:
2013 թվականի հոկտեմբերի 9-ին արժանացել է Երևանի պատվավոր քաղաքացի կոչմանը: